

Գրետա Յ. Նիկողոսյան

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ԷԶԵՐՈՒՄ*

Բանալի բառեր – հայ թարգմանական գրականություն, ֆրանսերեն թարգմանություններ, 19-րդ դարի երկրորդ կես, «Արարատ» ամսագիր, ֆրանսիացի հայագետներ, դասական շրջանի ֆրանսիական գրականություն:

1868 թ. Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու նախաձեռնությամբ սկսեց հրատարակվել «Արարատ» ամսագիրը, որը Կովկասում լույս տեսնող կրոնագիտական, եկեղեցագիտական, հայագիտական, բանասիրական առաջին ամսագրերից էր և մեծապես նպաստեց գիտության այդ ճյուղերի զարգացմանը, ինչպես նաև իր նշանակալից դերն ունեցավ հայ ժողովրդի եկեղեցական և հասարակական կյանքում:

Ամսագրի նպատակն էր Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի դերի ու նշանակության բարձրացումն ու ամրապնդումը, Հայ եկեղեցու դավանաբանության, հայության ազգային նկարագրի և ինքնության պաշտպանությունը: Ամսագրի լեզուն աշխարհաբարն էր, իսկ խմբագրական աշխատանքներով զբաղվում էր Սուրբ Էջմիածնի միաբաններից կազմված կոլեգիան՝ Ամենայն հայոց կաթողիկոսի նշանակած խմբագրի ղեկավարությամբ: Տարբեր ժամանակաշրջաններում ամսագրի խմբագիրներ են եղել Աբել արքեպիսկոպոս Մխիթարյանը, Խորեն վարդապետ Ստեփանեն, Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Գարեգին վարդապետ Հովսեփյանը (Գարեգին Ա Հովսեփյան), Հուսիկ արքեպիսկոպոս Մովսիսյանը, Աբել արեղա Աբրահամյանը, Ներսես վարդապետ Միքայելյանը և այլոք:

«Արարատ»-ի շուրջ համախմբվել են ժամանակի գրեթե բոլոր հայ անվանի գիտնականները, աստվածաբան հոգևորականները, գրողները: Ամսագրին աշխատակցել են Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, Գարրիել արքեպիսկոպոս Այվազովսկին, Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանը, Վահրամ եպիսկոպոս Մանկունին, Սահակ վարդապետ Ամատունին, Վահան վարդապետ Բաստամյանցը, Կոմիտասը, Ղազարոս Աղայանը, Հրաչյա Աճառյանը, Նիկողայոս Ադոնցը, Ստեփան Մալխասյանցը, Լեոն,

Ը (ԺԳ) փաթիլ, թիվ 1 (53) հունվար-մայր, 2016
ՎԿՎ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 26.03.2016:

Նիկողայոս Մառը, Հակոբ Մանանդյանը, Հայկունին, Երվանդ Լալայանը, Գրիգոր Ղափանցյանը, Հովհաննես Հովհաննիսյանը և ուրշներ :

Ամսագիրն իր ուղղվածության շրջանակներում բազմիցս անդրադարձել է նաև օտարագիր հեղինակների, որովհետև թարգմանական գրականության ավանդույթները բավականին խորը արմատներ ունեն հայ մշակույթի պատմության մեջ՝ սկսած 5-րդ դարից մինչև մեր օրերը: Հայ առաջադեմ մտավորականությունը մշտապես խորը հարգանք է տածել այլ ժողովուրդների հոգևոր արժեքների նկատմամբ, ինչը դրսևորվել է նաև նրանց թարգմանչական ակտիվ գործունեությամբ, որն էլ դարձել է հայ գիտական ու մշակութային կյանքի անբաժանելի ուղեկիցը նրա գոյության բոլոր շրջաններում:

19-րդ դարի հայ թարգմանական գրականության համապատկերում ֆրանսիական գրականության ներկայացվածությունը, ամենամեծ տեղն էր զբաղեցնում մանավանդ՝ արևմտահայ իրականության մեջ: Շնորհիվ «Արարատ» ամսագրի այդ գործընթացն իր արտացոլումը գտավ նաև արևելահայոց կյանքում:

Ֆրանսիական գրական մտքի բուռն մուտքը հայկական միջավայր, ինչ խոսք, պատահական ու տարերային չէր և պատճառաբանվում էր հետևյալ հիմնական իրողություններով. **առաջինը** կապված էր հայ մտավորականության այն հատվածի հետ, որը տեղյակ էր Ֆրանսիայում կատարվող գրական տեղաշարժերին ու դրանց շարժառիթներին և իր ստացած կրթության ընձեռած հնարավորություններով, որն այս դեպքում առաջին հերթին ֆրանսերենի փայլուն իմացությունն էր, կապող օղակ էր դառնում մշակութային երկու միջավայրերի արանքում՝ նպատակ ունենալով հայացնելու, տեղայնացնելու եվրոպական առաջադեմ մտածողների գործերը, որոնց մեջ ֆրանսերենով գրվածները, իրենց առանցքային դերն ունեին տվյալ պատմա-շրջանում: **Երկրորդ**՝ ավելի կարևոր հանգամանքը թերևս թարգմանական գործի ծրագրված իրականացումն էր, որը աղերսներ ուներ ժամանակի հայ քաղաքական շահախնդրությունների հետ: Այս երևույթը ցայտուն է երևում հայ պարբերական մամուլի էջերում տեղ գտած թարգմանական գրականության թե՛ թեմատիկ ընտրությունը և թե՛ հրատարակությունների ժամանակագրությունը հաշվի առնելով: Հատկապես սկսած 19-րդ դարի 70-ական թթ. շեշտակի կերպով ավելանում են ինչպես Օսմանյան կայսրության ներկա և անցյալ ամենատարբեր խնդիրներին ու նաև Արևմտյան Հայաստանի դրությանը վերաբերող հրապարակումները:

«Արարատ» ամսագիրը, չնայած իր պահպանողական ուղղվածությանը, ֆրանսիական թարգմանական գրականությանը ամենից շատ անդրադարձած պարբերական հրատարակություններից մեկն էր՝ մի տարբերությամբ միայն, որ ֆրանսիական գրական-կրթական ու քաղաքական մտքի թարգմանությունից զատ՝ նա իրականացրել է նաև կրոնագիտական բնույթի գործերի թարգմանություն:

Այսպես, «Արարատ»-ի էջերում թարգմանված ենք տեսնում ֆրանսիացի անվանի հայագետ **Անտուան Ժան Սեն-Մարտենի** (Antoine Jean de Saint-Martin) որոշ գործեր: Ամսագրի չորս համարներում տպագրվել է նրա՝ «Հայոց լեզուի և գրականութան գիտնական նշանակությունը», որը «Յիշատա-

կարան Հայաստանի»¹ երկասիրության առաջաբանն է²: 1875 թվականին «Արարատ»-ը անդրադարձել է բավականին հետաքրքրաշարժ մի հեղինակի՝ գրող և լրագրող **Ալֆրեդ դե Կաստոնին** (Alfred de Caston, 1821–1882), որի կենսագրական տվյալները բավականաչափ ուսումնասիրված չեն: Այնուամենայնիվ, հայտնի է, որ վերջինս Կրետեի և Եգիպտոսի վերաբերյալ հոդվածներ է գրել 19-րդ դարի Հանրագիտարանի (Encyclopédie du XIXe siècle) համար: Բնակություն հաստատելով Կ. Պոլսում՝ նա 1874-ին հրատարակում է «Մուսուլմաններ և քրիստոնյաներ: Թուրքիան 1873-ին» գործը՝ վստահեցնելով, որ այդ գրքում անփոփոխ է «այն ամենակարևորը, որ երբևէ ասվել է Թուրքիայի մասին և տպագրվել է Պոլսում»³: «Արարատ»-ում է տպագրվել նաև հեղինակի «Հայոց ազգն և եկեղեցին» հոդվածը⁴, որն առաջին անգամ լույս է տեսել Կ. Պոլսի «Revue de Constantinople» ֆրանսալեզու շաբաթաթերթում:

1880 թվականին ամսագրի էջերում անդրադարձ է կատարվում **Վիկտոր Լանգլուայի** (Victor Langlois) «Գինուայի (Ջենովա – Գ. Ն.) հասարակապետութեան յարաբերութիւնները Փոքր Հայաստանի թագաւորութեան հետ ժԳ և ժԴ դարերում»⁵ հետազոտությանը: «Արարատի» հաջորդ համարներում տպագրվում են նաև ֆրանսիացի փիլիսոփաներ **ժյուլ Սիմոնի**⁶ (Jules Francois Simon) և **Էրնեստ Ռենանի**⁷ (Joseph Ernest Renan) երկերը: Ճանաչված հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան) թարգմանել և «Արարատում» տպագրել է աշխարհագրագետ, սոցիոլոգ, պատմաբան, քաղաքական գործիչ և անարխիզմի տեսաբան **ժակ Էլիզե Ռեկլյուի** (Jacques Elisée Rec-lus) «Նոր ընդհանուր աշխարհագրություն» գրքից որոշ հատվածներ՝ «Լազիստան, Հայաստան և Քուրդիստան»⁸ ընդհանուր վերնագրով:

«Արարատ»-ում հանդիպող առաջին ֆրանսերեն գրական գործերը մաթեմատիկոս, ֆիզիկոս, փիլիսոփա և գրող **Բլեզ Պասկալին** (Blaise Pascal) են, ով համարվում է նաև ֆրանսիական գրականության դասական շրջանի ամենակարևոր հեղինակներից մեկը: Ամսագրում անդրադարձ է կատարվել նրա «Մտորումներ» երկին և հրապարակախոս Գրիգոր Տեր-Մելքիսեդեկյանի թարգմանությամբ տպագրել է մի հատված՝ «Մարդու անկատարելությունը» վերնագրով⁹: Չնայած Պասկալի աշխատանքն ինքնին անավարտ ստեղծագործություն է, սակայն այն բաղկացած է առանձին հատվածներից, որոնք ոչ միայն հիացնում են իրենց ինքնատիպությամբ և խորը գաղափարական բովանդակությամբ, այլև առանձնանում են ռճական կատարելությամբ:

1 Saint-Martin J.-A., Mémoires historiques et géographiques sur l'Arménie, 2 vol., Paris, 1818-19.

2 Սէն-Մարթէն, Հայոց լեզուի և գրականութեան գիտնական նշանակութիւնը, «Արարատ» ամսագիր, 1872, Ե, էջ 322-325:

3 Alfred de Caston, Musulmans et chrétiens: la Turquie en 1873, Constantinople, 1874.

4 Տը Քասթոն Ալֆրէտ, Հայոց ազգն և եկեղեցին, «Արարատ» ամսագիր, 1875, Ը, էջ 195-197:

5 Լանգլուա Վիկտոր, Գինուայի հասարակապետութեան յարաբերութիւնները Փոքր Հայաստանի թագաւորութեան հետ ժԳ և ժԴ դարերում, նոյն տեղում, 1880, ԺԲ, էջ 28-37; ԺԲ, էջ 68-75:

6 Սիմոն ժիլ, Ակադեմիա բարոյական և քաղաքական գիտութեանց: Մայրական կաթնատուութիւն, նոյն տեղում, 1881 ժԳ, էջ 620-623:

7 Ռենան Էրնեստ, Մահմետականութիւն և գիտութիւն, նոյն տեղում, 1884, ԺԷ, էջ 22-37:

8 Ռեկլիւ Էլիզէ, Լազիստան, Հայաստան և Քուրդիստան, նոյն տեղում, 1892, ԻԵ, էջ 115-138; 1892, ԻԵ, էջ 218-239; ԻԵ, էջ 324-354; ԻԵ, էջ 410-422; ԻԵ, էջ 520-530; ԻԵ, էջ 611-637; ԻԵ, էջ 710-727; ԻԵ, էջ 790-797:

9 Պասկալ Բլէզ, Մարդու անկատարելութիւնը, «Արարատ» ամսագիր, 1871, Գ, էջ 386-391:

Երկի որոշ հատվածներ ավարտուն փիլիսոփայական էսսեներ են, և «Մարդու անկատարելությունը» կարելի է դասել դրանց շարքին:

Ֆրանսիացի հեղինակների առատությանը են աչքի ընկնում «Արարատ»-ի 1876 թվականի համարները: Նրանցում անդրադարձ է կատարվում այնպիսի հեղինակների, ինչպիսիք են՝ **Ժան-Բատիստ Մասիլյոնը** (Jean-Baptiste Massillon)¹⁰, **Ժան դը Լաֆոնտենը** (Jean de La Fontaine), **Ֆրանսուա-Ռենե դը Շատոբրիանը** (François-René, vicomte de Chateaubriand), **Ֆենելոնը** (François de Salignac de La Mothe Fénelon) և այլոք: Ժան Բատիստ Մասիլյոնը (1663—1742) ֆրանսիացի քարոզիչ էր, որն իր ստեղծագործություններում մեծ հմտությամբ նկարագրում էր Աստուծոց հեռացած հոգիների անդիմանալի տանջանքները: Ամսագիրը հեղինակին անդրադարձել է նաև 1886, 1887 թվականներին՝ ներկայացնելով նրա «Մահ»¹¹, «Աշխարհ»¹² և «Մարդոց արած դատողությունն ու դատաստանը»¹³ աշխատությունները: Ինչ վերաբերում է Լաֆոնտենին, ապա նրան ամսագիրն անդրադարձել է մեկ անգամ՝ 1876 թվականին՝ տպագրելով հեղինակի «Երկու աղանի»¹⁴ չափածո առակը: 1876-ին «Արարատ» ամսագրում տպագրվել է նաև Շատոբրիանի «Բարիք Քրիստոնեության»¹⁵ աշխատանքը, ինչպես նաև Ֆենելոնի «Կրօնական արարողությանց կարևորությունը»¹⁶ գործը:

1878 թվականը ոչ պակաս արգասաբեր էր ամսագրում ֆրանսիացի հեղինակների առկայության առումով. Սարգիս Մարությանցի թարգմանությամբ տպագրվում են ֆրանսիացի հայտնի երգիծաբան բանաստեղծ **Նիկոլա Ժոզեֆ Ֆլորան Ժիլբերի** (Nicolas Joseph Florent Gilbert) երկու բանաստեղծությունները¹⁷: Ամսագրում տեղ է գտնում նաև արձակագիր և թատերագիր **Էռնեստ Լեգուվեի** (Gabriel Jean Baptiste Ernest Wilfrid Legouvé) «Հինգ կրթություն»¹⁸ մանկավարժական հարցեր պարունակող ճառը, որը գրողն արտասանել էր Մոնժ վարժարանում. աշխատանքի թարգմանիչն էր Խորեն վարդապետ Ստեփանեն:

Այս շարքում անկարելի է շրջանցել նույն թվականին ամսագրի անդրադարձը մեծանուն **Վիկտոր Հյուգոյին** (Victor Hugo), որն ամսագրի ընթերցողներին ներկայանում է երեք չափածո ստեղծագործություններով: Ստեփանոս Մալխասյանցի թարգմանությամբ ֆրանսիական ռոմանտիզմի առաջնորդի «Հուրն երկնից»¹⁹ բանաստեղծությունը նրա «Արևելյան մոտիվներ» ժողովածուի հիմնային ստեղծագործություններից էր: Այս ժողովածուն բեկումնային էր Հյուգոյի համար, քանի որ հենց դրանով է սկզբնավորում նրա ինտելեկտուալ և ճարտասանական պոեզիայի փոխակերպումը զգացմունքային, ռոմանտիկ պոեզիայի: Մյուս երկու ստեղծագործություններն են

10 **Մասիլեոս**, Ամնահություն հոգույ, «Արարատ» ամսագիր, 1876, Ը, էջ 123-126:

11 Նույնի՝ Մահ, «Արարատ» ամսագիր, 1886, ԺԹ, էջ 513-518:

12 Նույնի՝ Աշխարհ, «Արարատ» ամսագիր, 1887, Ի, էջ 469-480:

13 Նույնի՝ Մարդոց արած դատողությունն ու դատաստանը, «Արարատ» ամսագիր, 1887, Ի, էջ 97-104:

14 **Լա Ֆոնթեն**, Երկու աղանի, «Արարատ» ամսագիր, 1876, Թ, էջ 458-460:

15 **Շատոբրիան**, Բարիք Քրիստոնեության, «Արարատ» ամսագիր, 1876, Թ, էջ 203-206:

16 **Ֆենելոն**, Կրօնական արարողությանց կարևորությունը, «Արարատ» ամսագիր, 1876, Ը, էջ 42-43:

17 **Ժիլպեր**, Վերջին վայրկեանը վաղամեռիկ բանաստեղծի, «Արարատ» ամսագիր, 1878, Ժ (Բ), էջ 67:

18 Վերջին դատաստան, «Արարատ» ամսագիր, 1878, Ժ, էջ 149-151:

19 **Լրգուվե**, Հինգ կրթություն, «Արարատ» ամսագիր, 1878, ԺԱ, էջ 406-416:

19 **Հիգո Վիկտոր**, Հուրն երկնից, «Արարատ» ամսագիր, 1878, ԺԱ, էջ 192-194 և 263-271:

«Յափշտակութիւն մտաց»²⁰ և «Մովսէս ի Նեղոսի»²¹ բանաստեղծությունները: Նույն՝ 1878 թվականին տպագրված վերջին ֆրանսիացի հեղինակը **Ժակ Դելիլն** է (Jacques Delille)՝ բանաստեղծ և թարգմանիչ, ֆրանսիական կլասիցիզմի վերջին ներկայացուցիչներից: Հեղինակի «Գիւղական երէց»²² բանաստեղծությունը թարգմանաբար ներկայացրել է Ս. Մարությանցը:

1880 թվականին **Էրկման-Շատրիան** (Erckmann-Chatrian) անվան տակ տպագրվել է «Երեք հոգի» պատմվածքը²³՝ Միքայել Տեր-Ավետիքյանի թարգմանությամբ: Էրկման-Շատրիան հավաքական կեղծանունն օգտագործվել է 1847-1887 թթ. երկու ֆրանսիացի գրողներ Էմիլ Էրկմանի և Ալեքսանդր Շատրիանի կողմից, որոնք նաև ստեղծագործել են իրենց սեփական անուններով: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ամսագրում հետագա տարիներին բավականին հաճախ տպագրվող ֆրանսիացի հեղինակներ **Եվգենիուս Բերայեն** (Eugène Bersier) և **Էլիզե Ռեկյուն**: Պատուր Եվգենիուս Բերայեն գործի մարդ էր: Նա հիմնադրել է լ'Էթուալ Ավետարանական եկեղեցին և պատարագ մատուցելու նոր մեթոդներ մշակել: Բերայեն խաղաղասեր մարդ էր և փորձում էր վերականգնել Բարեփոխված Եկեղեցու միասնությունը: Նա Բողոքականության պատմության մեծ սիրահար էր և 1885-ին մի քանի դասախոսություն է կարդացել Նանտի էդիկտը չեղյալ հայտարարելու վերաբերյալ²⁴: Բերայեի ստեղծագործությունները «Արարատ» ամսագրում տպագրվել են 1889-1894 թվականներին՝ ներառելով վերջինիս բարոյախոսությունները և քարոզները: Առաջին բարոյախոսության²⁵ թարգմանիչն էր Եղիշե քահանա Գեղամյանցը, հաջորդ գործերի թարգմանությունների հեղինակները նշված չեն:

«Արարատի» էջերում լայնորեն տպագրված՝ ֆրանսիացի հեղինակների երկերն ու դրանց թարգմանությունները իրենց խոր ազդեցությունն ունեցան ինչպես հայ գրականության, այնպես էլ հայ գիտական մտքի և հայոց լեզվի վրա: Միաժամանակ՝ նրանք նպաստեցին այն առաջավոր գաղափարների տարածմանը, որոնք հայ գրական միտքը ձգտում էր արմատավորել ընթերցող հասարակության շրջանում: Ուստի «Արարատ» ամսագիրը, չնայած իր պահպանողական ուղղվածությանը, իր գործունեության տարիներին տպագրելով ֆրանսիացի հեղինակների շուրջ 70 ստեղծագործություններ՝ մեծապես նպաստել է նաև առաջադեմ գաղափարների տարածմանը հայ իրականության մեջ:

Ֆրանսիական գրականության ու հասարակական մտքի այս հարուստ շտեմարանը այսօր էլ սպասում է իր հայ ընթերցողին, որովհետև մեզանում շատերը մինչ օրս տեղյակ չեն ներկա հրապարակման մեջ թվարկված ֆրանսիացի հեղինակների արժեքավոր գործերի հայերեն թարգմանությունների առկայության մասին:

20 **Հիզոն Վիկտոր**, Յափշտակութիւն մտաց, «Արարատ» ամսագիր, 1878, Ժ, էջ 152:

21 Նույնի՝ Մովսէս ի Նեղոսի, «Արարատ» ամսագիր, 1878, Ժ, էջ 105-108:

22 **Տրլիլ**, Գիւղական երէց, «Արարատ» ամսագիր, 1878, Ժ, էջ 27:

23 **Էրկման - Շատրիան**, Երեք հոգի, «Արարատ» ամսագիր, 1880, ԺԳ, էջ 200-214:

24 Virtual Museum of Protestantism, Eugène Bersier (1831-1889), <http://www.museeprotestant.org/>.

25 **Բերսիէ Եվգենիուս**, Փոքր բաների մասին, «Արարատ» ամսագիր, 1889, ԻԲ, էջ 364-380:

Գրետա Յ. Նիկողոսյան– գիտական հետաքրքրություններն ընդգրկում են 19–րդ դարի հայ իրականության վրա ֆրանսիական գրականության ու հասարակական մտքի ազդեցության հետ կապված հիմնախնդիրները :

Summary

FRENCH LITERATURE ON THE PAGES OF “ARARAT” JOURNAL

Greta Y. Nikoghosyan

Keywords – Armenian literature, translations from the French, the second half of the XIX century, journal «Ararat», French Armenologists, French literature of classical period.

At the end of the 19th century the number of translations of European and especially French authors into Armenian greatly increased, respectively, the Armenian press of these years began to publish translations of foreign authors, in addition to original works. The magazine turned to the works of such great French authors like Antoine Jean de Saint–Martin, Blaise Pascal, Francois Rene de Chateaubriand, Jean de La Fontaine, Victor Hugo, Jacques Delille, Jacques Elisee Reclus and others. The works of French authors left some great influence on the Armenian language, literature and scientific thought in general, and the journal «Ararat» undoubtedly contributed to this process.

Резюме

ФРАНЦУЗСКАЯ ЛИТЕРАТУРА НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА “АРАРАТ”

Грета Ю. Никогосян

Ключевые слова – армянская переводная литература, переводы с французского, вторая половина XIX века, журнал «Арарат», французские арменоведы, французская литература классического периода.

В конце 19–го века значительно возросло количество переводов произведений европейских и особенно французских авторов на армянский язык. Армянская пресса этих лет помимо оригинальных произведений стала широко издавать также переводы иностранных авторов. Журнал «Арарат» обращался к творчеству таких великих французских авторов, как Антуан Жан де Сен–Мартен, Блез Паскаль, Франсуа Рене де Шатобриан, Жан де Лафонтен, Виктор Гюго, Жак Делиль, Жак Элизе Реклю и др. Произведения французских авторов имели большое влияние на армянский язык, литературу и научную мысль в целом, и журнал «Арарат» несомненно внес свою лепту в этот благородный процесс.